ԴԻԱԿԻԶՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (մ. թ. ա. II—մ. թ. III դդ.)

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին տարիների պեղումները վկայում են, որ Հայաստանում հելլենիստական շրջանում և մ. թ. առաջին դարերում գոյություն են ունեցել թաղման մի շարք ձևեր։ Առանձին հնավայրերում գերակշռում են դրանցից մեկը կամ երկուսը։ Հստակապես ուշագրավ են դիակիզումով կատարված թաղումները, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում թաղման արարողության, ծիսակատարությունների, պաշտամունքի հետ կապված մի շարք հարցեր լուսաբանելու առումով։ 1970 թ. Սիսիանում բացված իշխանական դամբարանի և 1971 թ. Արտաշատի դամբարանադաշտերի պեղումները ցույց են տալիս, որ անտիկ շրջանում թաղման այլ ձևերի հետ միասին տարածված են եղել դիակիզումը և դիակի թաղումը, որը ուղեկցվել է թաղման հանդիսավոր արարողություններով և ծիսական ճաշկերույթով՝ հոգեհացով։

Սիսիանի դամբարանը (որի ներսը ավերված էր տեղի բնակիչների կողմից) ծածկված էր լավ մշակված կրաքարե երեք սալերով (150×70×24 սմ), որոնց վրա հող էր լցված, իսկ կողքերին շարված էին խոշոր հում աղյուսներ (63×49×20 սմ)։ Ամբողջ հատակը (մոտ 25 քմ տարածությամբ) ծածկված էր 10—20 սմ հաստությամբ մոխրախառն կպչուն հողով։ Վերջինիս մեջ կային մեծ քանակությամբ կրակից սևացած խոհանոցային խեցեղենի՝ փոքր կարասների, կճուճների, սափորների, խոր թասերի և այլ անոթների բեկորներ ու այրված ոսկորների կտորներ։ Հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան անկյուններում տեղավորված էին երկու խարիսխներ, որոնցից առաջինը բազալտից էր, քիչ ավելի մեծ և համարյա սալերին կպած, իսկ երկրորդը՝ կրաքարից (ավելի հեռու)։

Դամբարանի ստորերկրյա շինությունը ինքնատիպ էր, շարված սրբատաշ կանոնավոր կրաքարերից։ Արևմտյան և արևելյան պատի քարերը, չորրորդ շարքից մինչև յոթերորդը, երկու կողմից փոքր-ինչ առաջ էին դրված, որի հետևանքով դամբարանի վերին մասը աստիճանաձև նեղանում էր և փակվում ծածկի երեք սալերով։ Հարավային և հյուսիսային պատերը ուղիղ են, ներսի չափերն են. հատակագծում՝ 210×180 սմ. բարձրությունը՝ 166 սմ։ Մուտքը (71×65 սմ) դամբարանի արևմտյան կողմում էր, հարավային պատին կից՝ նույնսլիսի մշակմամբ, բայց ավելի փոքր քարերով, որոնք ըստ անհրաժեշտության կարող էին հանվել և նորից տեղադրվել։ Հատակը ծածկված էր ոչ այնքան խնամքով մշակված սալերով, որոնք մտնում էին պատերի քարերի տակ։ Կավե սարկոֆագը (երկարությունը՝ 115 սմ, լայնությունը՝ 57 սմ, խորությունը՝ 60 սմ) տեղավորված էր դամբարանի արևելյան պատի երկայնքով, ուղղակի սալահատակի վրա։ Այն պատրաստված էր խոշորահատիկ կարմիր կավից, իսկ մակերեսը փայլեցված էր դեղնավուն անգոբով։ Իրանը հարդարված է տարբեր հեռավորության վրա գտնվող պարանաձև երեք ուռուցիկ գոտիներով։ Հորիզոնական կտրված պսակի եզրերը վնասվել են հա-

վանաբար սարկոֆագը ներս մտցնելիս կամ էլ ծանր կափարիչը վերցնել-գը-նելու հետևանքով։





Նկ. 1

Սարկոֆագը բաց էր, իսկ նույն կավից պատրաստված, երկու երեսը մրոտ կափարիչը կանգնեցված էր հարավային պատի տակ (երկարություն՝ 110 սմ, լայնությունը՝ 52 սմ, խորությունը՝ 14,5 սմ)։ Սարկոֆագի մեջ կար մոտ 5 սմ հաստությամբ մոխրախառը հող։ Կողքին, դամբարանի կենտրոնում, տեղավորված է եղել մահիճը (բազմոցը), քանի որ այդ մասում տարբեր ձևերով (կանգնած, թեք պառկած) ընկած էին նրա բրոնզե ձևավոր ոտքե-

ը ու միացման երկաթյա ձողերը։ Մահճի վերին մասում, հյուսիսային պատի տակ, դրված էր բրոնզյա, գեղեցիկ ձևավորված եռոտանի աշտանակը։ Ուղեկցող մյուս իրերը գտնվում էին պատի տակ, հավանաբար դրանք եղել են նաև մահճի վրա։ Դամբարանի հատակի 25 սմ հաստությամբ հողաշերտը լցվել է հետագայում, թափանցող ջրերի հետ (նկ. 1, 2)։

1971—1972 թթ. պեղվել են նաև Արտաշատի հարավ-արևելյան (Շիրազ գյուղի դաշտերում), արևելյան և բլուրներից արևմուտք գտնվող դամբարանադաշտերը, որոնք խիստ ավերված վիճակում էին։ Մեզ հաջողվել է այդ վայրերում պեղել մոտ 65 ավերված և ամբողջական դամբարան, որոնցից մոտ 50-ում դիակիզումը կատարվել է հողի կտրվածքում։ Ե՛վ դիակիզումով, և՛ դիակի թաղումով գերեզմաններում նկատելի են կրակի շուրջ կատարվող ծիսական հանդիսավոր արարողությունների և հոգեհացի հետքեր։ Առանձին դիակիզված թաղումներ պեղվել են նաև Փոքր Վեդու դաշտերում։



Նկ. 2

Դիակիզված դամբարանները գլխավորապես հիմնահողային են՝ աճյունասափորների մեջ։ Հիմնահողային դամբարանները սովորաբար զբաղեցնում էին 150×150 սմ տարածություն, խորությունը լինում էր 80—100 սմ, այն հասնում է ավազաշերտին։ Դամբարանափոսերում ի հայտ էին գալիս մարդկային և կենդանական ոսկորներ՝ մոխրի և կպչուն սև հողի հետ խառը։ Բոլոր դամբարաններից հայտնաբերվում էին ոչխարի մեկ կամ մի քանի վեգ, փայտածուխի մի քանի կտորներ և խեցեղենի բեկորներ։ Դամբարանափոսերի վրա սովորաբար դրված էին լինում երկու կամ երեք տձև քար (նկ. 3)։ Դիակիզման ծիսակատարությունը կատարվել է տեղում, փոսի մեջ կամ նրա շուրջը։ Որոշ դամբարանների կողքին հոգեհացի համար փոքր և մեծ քարերով պատրաստվել են տարբեր չափերի (130×60 սմ, 160×100 սմ և այլն) ուղղանկյուն հարթակներ (նկ. 4)։

Միանգամայն այլ կառուցվածք ունեին հարավ-արևելյան (№№ 10, 15, 21) դամբարանները։ № 10 դամբարանը գրեթե շրջանաձև էր, կավով սվաղված, որը ուժեղ կրակից կարմրել ու թրծվել էր (նկ. 5)։ № 15 դամբարանի հարթակը երկշարք էր՝ կառուցված աղորիքների վերին ու ներքին (8 հատ), ինչպես նաև լծակավոր աղորիքներից և խոշոր տաձև քարերից։ Երկու հարթակների արանքում կային ոսկորներ և խեցեղենի բեկորներ։ Կենտրոնական մասում սևացած հող էր՝ ոսկորների վառված մնացորդներով։ Վառված ոսկորներ գտնվեցին նաև կողքի սևացած ավազահողերի միջից։ Դամբարանի հարավային ծայրում բացված մեծ, գրեթե քառակուսի, տաձև քարի տակի սևացած հողաշերտերից նույնպես մարդկային վառված ոսկորների մնացորդներ ու կավամանների բեկորներ դուրս եկան։ Անոթների մեջ (կոտրված ու խառը լցված) և շուրջը հայտնաբերվեցին մեծ քանակությամբ ընտանի կենդանիների, խոշոր ու մանր եղջերավոր անասունների ոսկորներ։ Դամբարանում նկատելի էին



Նկ. 3

փայտածխի և մոխրի հետքեր։ № 21 դամբարանը մյուսներից առանձնանում էր իր կառուցվածքով (նկ. 6)։ Այն շրջանաձև էր՝ պատերը շարված մանր գետաքարերով, կրաշաղախով (տրամագիծը՝ 95 սմ, բարձրությունը պատի տակ 35 սմ, կենտրոնում՝ 52 սմ)։ Նույն քարերով շարված հատակի կենտրոնում շրջանաձև փոքրիկ փոսիկ էր արված (տրամագիծը՝ 30 սմ, խորությունը 10 սմ)։ Դամբարանը ներսից հարթեցված էր կրաշաղախով և լցված կրակից սեվացած մոխրախառն հողաշերտով, որի մեջ կային մարդու ատամներ, խոշոր անասունի վառված ոսկորներ, փայտածխի և անոթների սևացած բեկորներ, իսկ կենտրոնի փոսիկում՝ միայն մոխիր։

Նույնպիսի պատկեր էր նկատվում նաև աճյունասափորներում։ Դրանք կանգնեցրած կարասներ են, որոնց կողքին կատարվել է դիակիզման արարո-

ղությունը, իսկ ոսկորների մնացորդները, մոխիրն ու սևացած հողը լցրել են կարասների մեջ։ Որոշ դեպքերում դիակիզումը կատարվել է կարասների մեջ, որի հետևանքով նրանց ներսը սևացել է։ Կարասների մեջ լինում էր նաև փայտածխի մի կտոր, մի վեգ և խեցեղենի առանձին բեկորներ։ Խեցեղենի բեկորները և ուղեկցող մյուս նյութերը դուրս էին դալիս նաև դրանց կողքի սևացած հողից։ Դամբարանադաշտի տարածքում գտնվել են չորս կրաքարե խարիսխ և կավե խողովակի կտոր։

Համանման դամբարաններ պեղվել են նաև Փոքր Վեդու դաշտերում, որոնց հարթակների (մոտ 8 քմ) վրա ևս կար 30—35 սմ հաստությամբ մոխրի շերտ։ Այստեղից գտնվեցին տարբեր տեսակի խեցեղենի մոտ 600 բեկորներ։ Հարթակի վրա բացվեց հակառակ երեսով դրված մի խարիսխ և տաշած քառանկյուն քար։ Ընդհանրապես Արտաշատի դամբարաններից գտնվել է մոտ 15 խարիսխ։



Նկ. 4

Հետաքրքիր են գյուղի ծայրին հայտնաբերված լատիներեն արձանագրությունները, որոնցից մեծը փորագրված է խոշոր տառերով և կրում է հռոմեական կայսր Տրայանոսի անունը, իսկ մյուսը տապանաքար է։ Երկուսն էլ արձանագրված են Վեդու կրաքարից պատրաստված սալերի վրա։ Հայտնաբերվել են նաև մի սյան խարիսխ, շարվածքի մի քար, երկու աղորիք և I—III դդ. խեցեղենի բեկորներ։ Նույն վայրում ձեռնարկված մասնակի պեղումների շնորհիվ հայտնաբերվել են հելլենիստական ժամանակաշրջանի աղորիքներ, խեցեղենի բազմաթիվ բեկորներ, անտաշ, կոպիտ քարերով պատրաստված սալահատակի մաս, մոտ 150 մ հեռավորության վրա գտնվեց ավելի փոքր չափերի կրաքարե խարիսխ ևս[1]։

---

1 Բ. Առաքելյան, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 302)։

Լատիններեն մեծ արձանագրությունը տեղեկություններ է հաղորդում այն իրադրության մասին, որ ստեղծվել էր Հայաստանում Տրայանոսի արշավանքի հետևանքով։ Տապանաքարը թերի է[2] (լայնությունը՝ 0,72 սմ, երկարությունը՝ 1,67 մ)։ Բ. Առաքելյանը նշում է, որ առավել արժեքավոր է մեծ արձանագրությունը, ուր թվարկվելով Տրայանոս կայսեր ճոխ տիտղոսները, հաղորդվում է թե սկյութական 4-րդ լեգեոնը կատարեց (կանգնեցրեց, շիննց) երևի ինչ-որ կառուցվածք, որի վրա եղել է այդ արձանագրությունը։ Սակայն այդ կառուցվածքի ինչ լինելը պարզ չէ։ Այն եղել է տվյալ լեգեոնի ռազմական ամրո՞ցը, զորանո՞ցը, տաճա՞րը, դերեզմանո՞ցը, թե՞ այլ շինություն։



Նկ. 5

Այժմ դամբարանների պեղումները հնարավորություն են ընձեռում ենթադրելու, որ Բ. Առաքելյանի հայտնած կարծիքներից հավանականն այն է, որ հայտնաբերված արձանագրություններից մեծը կանգնեցվել է գերեզմանոցում, սկյութական 4-րդ լեգեոնի կողմից, ուր, հավանաբար, թաղվել են Արտաշատը նվաճելիս զոհված հռոմեական, տվյալ դեպքում մեզ հայտնի 4-րդ սկյութական և իտալիկների 1-ին լեգեոնի զինվորները։ Այդ է վկայում նաև տապանաքարը։ Ըստ երևույթին, բացի ընդհանուրից, յուրաքանչյուր դամբարան ունեցել է իր տապանաքարը։ Հնարավոր է, որ հետագա պեղումների ժա-

2 Նույն տեղում, էջ 309։

մանակ հայտնաբերվեն նոր տապանաքարեր։ Ճեղքված, կոպիտ քարերով պատրաստված և շաղախով հարթեցված սալահատակը, ըստ երևույթին, եղել է հողհացի հարթակ և չի պատկանել ոչ մի շինության։ Այս առթիվ հարկ է նշել նաև անոթների բեկորների առկայությունը։





Նկ. 6

Դիակիզումը Հայաստանում նորություն չէր, այն հանդիպում է դեռևս վաղ, միջին և ուշ բրոնզեդարյան, երկաթի և վաղ հայկական շրջաններում, այդպիսի թաղումներ պեղվել են Էջմիածնի շրջանի Շրեշ բլուրում և Կոտայքի շրջանի Էլար գյուղում[3]։ Էլարի դամբարաններից մի մասի մեջ դիակը այրել են հենց գերեզմանափոսում, անասունների հետ միասին։ Մյուսների

3 Ե. Լալայան, Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում («Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1923, № 3, էջ 94 և հտ.)։

մեջ գտնվում էին այրված ոսկորներով և բրոնզե ու երկաթե իրերով աճյունակալ կավե սափորներ։ Դամբարանների պատերին նկատելի են ծխի հետքեր, հավանաբար այստեղ ևս դիակները այրել են տեղում։

Դիակիզումով դամբարաններ հայտնաբերվել են նաև Զվարթնոցի[4] շրջակայքում, Լոռիում, Ոսկեվազում, Սևանի ավազանում[5] և այլուր։

Զաղալայում բացված դամբարանները անտաշ քարերով պատած ստորերկրյա կառույցներ են։ Դրանց պատերի քարերը սևացած են, որը դիակիզումը տեղում կատարելու նշան է։ Այստեղ այրված կմախքների հետ մեկտեղ հայտնաբերվել են բրոնզե և կավե իրեր։ Դրանց մեջ կան նաև ընտանեկան (տղամարդու, կնոջ, երեխայի) դամբարաններ։ Երբեմն դիակների հետ միասին այրել են նաև ղոհաբերվող եղներ, ձիեր և այլն։ Կան դամբարաններ, որոնք՝ ցածր պատերով բաժանվել են երկու մասի[6]։

Դիակիզումը հատուկ է եղել նաև ուրարտացիներին։ Ալթին-Թեփեի (Ոսկե բլուր) ստորերկրյա շքեղ բնակարանատիպ դամբարանների կողքին գոյություն ունեն Նոր Արեշի և Մալաքլուի դիակիզումով դամբարանները։ Դրանք հանգուցյալի աճյունը պարունակող ուրարտական տիպի կարմիր կավամաններ են և դամբարանային իրեր պարունակող կճուճներ, որոնք դրվել են հատուկ փորված փոսերի (ինչպես Նոր Արեշի կոլումբարիում) կամ էլ ժայռերի ճեղքերի և զետնի բնական փոսերի մեջ (ինչպես Մալաքլուում), երեսպատվել են մանր քարերով, իսկ աճյունասափորները ծածկվել են տուֆե սալաքարերով։ Դիակիզումը կատարվել է տեղում, հանգուցյալի իրերի հետ միասին։ Այդ են վկայում իրերի վրայի վառված հետքերը։

Մ. թ. ա. VI—V դդ. դիակիզումով հետաքրքիր կուրգան է պեղվել Շամշադինի շրջանի Գյոզլու կոչվող վայրում[7], որտեղ փորված է 150 սմ խորությամբ գրեթե շրջանաձև փոս (չափերը՝ 3,7×4 մ), կենտրոնում՝ ավելի փոքր չափերի մեկ այլ փոս (չափերը՝ 1,2×1 մ)։ Վերջինս լցված էր մոխրով ու ածուխով, որի մեջ հայտնաբերվել են մարդու ոսկորների վառված կտորներ և ատամի մաս։ Մեծ փոսում, գետաքարերի մեջ, գտնվել են հարյուրից ավելի ամբողջական և կոտրված ամաններ, անասունների չայրված ոսկորներ։ Գերեզմանի ներքին բաժնում կատարվել է դիակիզումը, իսկ վերին բաժնում դրվել են հանգուցյալի իրերը։ Վերջինիս վրա կազմվել է դամբանաբլուրը։

Հելլենիստական շրջանի դիակիզումով թաղում հայտնաբերվել է նաև Գառնիի ամրոցի չորրորդ աշտարակի մոտ, որտեղ դիակիզումը, իրերի հետ միասին, կատարվել է տեղում, կարասի մեջ։

---

4 Աշ. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1931, էջ 44։

5 Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 110 և հտ.։

6 Ե. Լալայան, Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք («Անդգագրական հանդես», գ. 15, 1907, էջ 166—173, 175 և հտ.)։

7 Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 10, էջ 63, և հտ.)։ Б. А. Куфтин, Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит («Вестник Гос. Музея Грузии», т. XIII—В, Тбилиси, 1943, стр. 4 и сл.).

8 С. А. Есаян, Погребения VI—V вв. до н. э. в гэрах Шамшадина («Советская археология» (СА), № 3, 1965, стр. 229 и сл.).

Դիակիզումը, որպես թաղման ձև, գոյություն է ունեցել հին աշխարհի շատ ժողովուրդների կենցաղում։ Այդ առումով հետաքրքիր է Հունաստանը, որտեղ դիակի թաղման հետ միասին մ. թ. ա. IX—VIII դդ. լայնորեն տարածված էր դիակիզումը, իսկ որոշ վայրերում (Կրետեում, Էլևսինում և այլուր) այն տիրապետող է եղել։ Հունաստանում գոյություն ունեցող դիակիզման ձևը նման էր ուրարտականին։ Այնտեղ ևս դիակիզումը կատարվում էր և՛ առանձին տեղում, և՛ նույն տեղում, իսկ մոխիրը լցվում էր սափորի մեջ[9]։

Դիակիզված թաղումներ հայտնաբերվել են Փոքր Ասիայում, Վրաստանում, Իտալիայում և հունական մյուս գաղութներում, որոնք խիստ նման են հունական դիակիզված դամբարաններին։ Այսպես, օրինակ, Տանագրայի, Դիպիլոնի գերեզմանների, Պանտիկապեի դիակիզումով դամբարաններում նույնպես գտնվել են հանգուցյալին ընծայաբերված անոթների բեկորներ նետված թաղման կրակի մեջ[10]։ Բոսֆորի դիակիզումով դամբարանները հանդես են գալիս հույների այնտեղ գալու ժամանակից սկսած և մեծ նմանություն ունեն հունականին[11]։

Հարավային թրակիացիները, Հերոդոտի[12] վկայությամբ, հանգուցյալներին թաղում էին կամ դիակիզումով, կամ դիակը հողում դնելով։ Այդ սովորությունը շատ տարածված էր մ. թ. ա. IV—III դդ. ողջ գեթական աշխարհում, որը նույնպես գալիս էր հնուց[13]։

Մ. թ. ա. VI—V դդ. Հունաստանում դիակիզումով թաղումները աստիճանաբար վերանում են, սակայն գաղութներում այն հարատևում է մինչև մեր թվականության սահմանագլուխը (մ. թ. ա. II—I դդ.)։

Այսօր դժվար է ճշգրիտ պատասխան տալ այն հարցին, թե ինչո՞ւ են այրել մահացածի դիակը։ Այս առիթով մասնագետները տարբեր կարծիքներ են հայտնել։ Հունաստանում դիակիզման դրդապատճառներն ուսումնասիրող գիտնականները գտնում են, որ այն արդյունք է քոչվորական և ռազմական կյանքի պայմանների, որոշակի կրոնական աշխարհայացքի, նեխող մարմնի նկատմամբ ունեցած նողկանքի, հոգու երկյուղի, հոգուն օգնելու ցանկության[14]։

Հնում գոյություն են ունեցել թաղման բազմազան ձևեր։ Սերվիոսը «Էնեականի» մասին տված բացատրություններում ասում է, որ եգիպտացիները դիակը մշակում, մումիա էին դարձնում, որպեսզի հոգին երկար ժամանակ չբաժանվի մարմնից, իսկ հռոմեացիները, ընդհակառակը, վառում էին այն, որ-

[9] H. Dragendorf, Theraeische Graber, Thera, Bd. II, Berlin, 1903, էջ 83 և հտ.։

[10] A. Brueckner und E. Pernice, Ein attischer Friedhof, Mitteilungen des Deutschen archaologischen Instituts 'Athenische abteilung, Athenai (AM), Bd. XVIII, 1893, стр. 156, 165; «Известия археологической комиссии» (ИАК), вып. 9, 1904, стр. 105, мог. 173; вып. 60, 1916, стр. 8 и сл., мог. 2; «Отчет археологической комиссии» (ОАК), за 1867 г., стр. X.

[11] Е. Г. Кастанаян, Грунтовые некрополи Боспорских городов VI—IV вв. до н. э и местные их особенности, «Материалы и исследования по археологии СССР (МИА), № 69, М.—Л., 1959, стр. 274 и сл.; М. И. Ростовцев, Скифия и Боспор, Л., 1925, стр. 330; Г. А. Цветаева, Грунтовый некрополь Пантикапея, его история, этнический и социальный состав (МИА), № 19, 1951, стр. 64.

[12] Herodot, V, 8.

[13] И. Т. Никулицэ, Погребальный обряд готтов в IV—III вв. до н. э. (СА, № 2, 1973, стр. 27 и сл., 41 и сл.).

[14] Е. Г. Кастанаян, նշվ. աշխ., էջ 271—273։

պեսզի հոգին արագորեն բաժանվի մարմնից և շտապ վերադառնա իր սկզբնական վիճակին[15]։ Սակայն մարդիկ աշխատել են ամեն կերպ իրենց ծանր վիշտն արտահայտել, նվիրատվություններ ու զոհաբերություններ անել, հնարավորին չափ հարմարավետ կացարան պատրաստել և այլ միջոցներով սիրաշահել ննջեցյալի հոգին, որպեսզի նա իրեն լավ զգա անդրշիրիմյան աշխարհում և կենդանի մարդկանց աշխարհը վերադառնալու ցանկություն չունենա, չչարանա ու չվնասի նրանց։ Միևնույն ժամանակ նրանք կարծում էին, որ բարեկամական հարաբերություններ պահպանելով և մշտապես հոգ տանելով հանգուցյալի հոգու մասին, կարող են նրանց բարյացակամությունը շահել և օգուտներ ստանալ։ Դրա համար էլ աշխատում էին կրակի միջոցով հնարավորին չափ արագ ոչնչացնել մարմինը, որպեսզի կտրվեր նաև մեռյալի հոգին կենդանի աշխարհի հետ կապող թելը։

Հայաստանում դիակիզումը հասնում է մինչև քրիստոնեության ընդունումը, սակայն նրա հետքերը, վերապրուկային ձևով, գոյատևել են մինչև XX դ. սկզբները։ Օրինակ՝ խոյեցիները թաղումից հետո, հանգուցյալի հետ գերեզման տարած ցախը դարսում էին գերեզմանի վրա ու վառում։ Անդրկովկասի շատ շրջաններում (Գանձակի գավառի Բանանց գյուղում) այդ անում էին նույն օրվա երեկոյան[16]։

Արտաշատի դամբարաններից շատերում կային ածուխի մեկ կամ մի քանի կտորներ և մոխիր՝ իբրև վկայություն կրակի պաշտամունքի և զորության։ Թաղման ծիսակատարության ժամանակ ածուխի կտորները և մոխրի մնացորդները համարվում էին կրակով չար ոգիներին վախեցնելու, գերեզմանը նրանցից մաքրելու միջոց[17]։ Սիսիանի և Արտաշատի դամբարաններում թաղման արարողությունը կատարվել է թաղման կրակի շուրջը, որն ուղեկցվել է զոհաբերություններով և հոգեհացով։ Լվացումներ կատարելուց հետո, հանգուցյալի մարմինն օծել են անուշահոտ յուղերով, դրել թաղման կրակի համար պատրաստված փայտերի վրա, երբեմն ուղղակի իրերի հետ և վառել, իսկ այդ նպատակի համար օգտագործվող անոթները դրել են հանգուցյալի հետ։ Սիսիանի և Արտաշատի դամբարաններում հայտնաբերվել են մեծ քանակությամբ այդպիսի տաշտեր, մետաղե, կավե և ապակե օծանելիքի անոթներ ու բեկորներ, ինչպես նաև բրոնզե թիակներ։

Արտաշատի դամբարաններում հայտնաբերված իրերը և կենդանական ոսկորների մնացորդները ցույց են տալիս, որ դամբարաններից մի քանիսում հոգեհացը բավական ճոխ է եղել։ Զոհաբերվել են տարբեր կենդանիներ՝ ցուլեր, ոչխարներ, որոնց միսն ուտելուց հետո, ոսկորները գցել են կրակի մեջ։ Օգտագործվել են խմիչքներ. դամբարաններից մի քանիսում հայտնաբերվել են տարբեր չափերի կարասներ ու կճուճներ։ Հոգեհացի համար բերված բոլոր անոթները ջարդվել ու նետվել են կրակի մեջ կամ գերեզմանի վրա, ուստի նույն անոթի բեկորները գտնվում են դամբարանի տարբեր մասերում։ Ըստ

---

[15] E. Rode, Psyche, Bd. I. Leipzig, 1898, էջ 30, ծան. 4։

[16] Ե. Լալայան, Հուղարկավորությունը և գերեզմանների զարգացումը Հայաստանում, էջ 95։

[17] В. С. Зеленчук, Очерки Молдавской народной обрядности, Кишинев, 1959, стр. 38; Г. К. Завойко, Верования и обычаи великоруссов Владимирской губернии («Этнографическое обозрение», 3—4, Москва, 1914, стр. 97); В. Хорузина, К вопросу о почитании огня («Этнографическое обозрение», 3—4, 1906, М., 1907, стр. 159).

երևույթին, հոգեհացի ժամանակ անոթների մի մասը վերածվել է շատ մանր բեկորների, որովհետև դրանք որոշ դամբարաններում հասնում են մի քանի հարյուրի։ Սիսիանի դամբարանի վրայի չթրծված, խոշոր աղյուսներից պատրաստված մոտ 25 սմ հաստությամբ ծառայել է դամբարանի ապահովության, թաղման կրակի, հոգեհացի, զոհաբերությունների և այլ արարողությունների համար։ Տեղի ունեցած բուռն ծիսակատարությունների, ճոխ հոգեհացի, մեծ կրակի, զոհաբերված անասունների շատության և օգտագործված ուտելիքի ու խմելիքի մասին են վկայում հարթակի վրայի 10—20 սմ հաստությամբ սևացած հողը, մոխիրը, կենդանիների ոսկորները և տարբեր անոթների 500-ից ավելի սևացած բեկորները։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում գոյություն են ունեցել զոհաբերության բոլոր ձևերը։ Սևանի ավազանի դամբարաններում դիակների հետ միասին հայտնաբերված եզան, ձիու և այլ կենդանիների վառված ոսկորները վկայում են, որ այստեղ առկա է թաղման ծիսակատարության ժամանակ կատարված, արյունոտ զոհաբերության ամենահին ձևը, երբ կենդանուն մորթելուց հետո, ննջեցյալի հետ միասին, ամբողջությամբ այրում էին։ Այդպիսի զոհաբերություն է նկարագրում նաև Հոմերոսը[18], ըստ որի զոհաբերության ժամանակ նախապատվությունը տրվում էր ցուլերին և խոյերին։ Հայաստանում էլ եզը, ձին ու խոյը եղել են զոհաբերության ամենահարգի կենդանիները։ Քսենոփոնը վկայում է, որ իր ավար վերցրած պառավ ձին նվիրում է դեղջավագին, որպեսզի սնուցի ու զոհաբերի, քանզի ինքը լսել էր, որ այն նվիրաբերված էր Հելիոսին[19]։

Սիսիանի և Արտաշատի դամբարաններում ներկայացված է արյունոտ զոհաբերության ավելի ուշ ձևը, երբ կենդանուն մորթում էին զոհասեղանի վրա, միսը ուտում էին, իսկ մնացորդները կոտրատած ամանեղենի հետ գցում կրակի մեջ կամ գերեզմանի վրա։ Արտաշատի դամբարաններից մի քանիսում և դամբարանադաշտի տարածքում գտնվել են երկայնքով կիսված ջրատար կավե խողովակներ, ամանների կիսակլոր բեկորներ, որոնք հավանաբար օգտագործվել են ստորերկյա աստվածներին նվիրված զոհաբերության արարողության ժամանակ, որի մոտ իբր ուղևորվելու էր հանգուցյալը։

Լուկիանոսը Խարոնի բերանով նկարագրում է թաղման արարողության ժամանակ մատուցված փառահեղ ճաշերի, գինու, մեղրի ու կաթի հեղման մասին, որի ժամանակ մեռածների հոգիները թռչելով չորս կողմը, հագենում էին գինու, յուղի, ծխի հոտից[20]։ Ծիսակատարության ժամանակ կատարվող զոհաբերությունները՝ հոգեհացը, հեղումները և այլն այնքան խոր արմատներ են ունեցել ժողովրդի մեջ, որ վերապրուկային ձևով շարունակվել են մինչև մեր օրերը։

Զոհաբերությունների և հոգեհացի մասին խոսելիս պետք է նշել նաև այդ դամբարանների վրա հայտնաբերված խարիսխները։ Դժբախտաբար դրանք մեծ մասամբ խախտված էին և դժվար է ասել, թե որ դամբարաններին են պատկանել։ Դամբարանների վրա խարիսխների այդքան հաճախ հայտնվելը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանք ունեցել են տան հիմքի, այսինքն՝ բը-

18 Հոմերոս, Ոդիսական (թարգմ. Ս. Գրքաշարյանի), Երևան, 1957, էջ 146, Հոմերոս, Իլիական (թարգմ. Հ. Համբարձումյանի), Երևան, 1955, էջ 146։

19 Քսենոփոն, Անաբասիս (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1970, էջ 98։

20 Lucian, Charon, 22.

նակարանի նշանակություն։ Հնարավոր է, որ դրանց մեծ մասը վերցված լինի ավերված շենքերից, թերևս հենց հանգուցյալների տներից։ Հավանաբար թաղման ծիսակատարության ընթացքում խարիսխները ժամանակավորապես ծառայել են նաև իբրև զոհասեղաններ։

Կերչում շարքային դամբարաններից մեկի վրա գտնվել է խաչաձև անցքով մի քառակուսի քար, որի տակ եղել է երեսնիվայր թաղված, կեսը կոտրված ամֆորա, այնպես որ քարի անցքը համընկնում է ամֆորայի կեսին։ Քարը ծառայել է իբրև զոհասեղան, իսկ շուռ տված ամֆորան օգտագործվել է զոհաբերության փոսի փոխարեն։ Նրա մեջ եղած հողում մոխիր կար։ Ամֆորան ծառայել է հանգուցյալի պատվին կատարվող հեղման և թաղման կրակի համար։ Սա մեռյալների պաշտամունքի հատկանիշներից[21] մեկն է, մանավանդ որ դամբարանը պատկանում է մ. թ. II դ.։

Այսպիսով՝ Հայաստանում ուշ հելլենիստական շրջանում թաղման այլ ձևերի հետ մեկտեղ տարածված է եղել նաև դիակիզումը[22]։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն բնորոշ է Արտաշատ քաղաքի մ. թ. ա. I, մ. թ. III դդ. դամբարանների համար։ Ինչպես արդեն նշեցինք, Գառնիում հայտնի է դիակիզման միայն մի դեպք, իսկ Վաղարշապատում, Օշականում և Հայաստանի մյուս վայրերում մինչև այժմ պեղված հելլենիստական և մ. թ. I դարերի դամբարանների մեջ այդպիսիք չեն հանդիպել։ Այս առումով կարևոր են Հայաստանի մյուս մեծ քաղաքների դամբարանների պեղումները, որոնք, դժբախտաբար, դեռևս չեն ձեռնարկվել։

Արտաշատում հայտնաբերված նյութական մնացորդները, կենդանական ոսկորները, թաղման կրակի հետքերը վկայում են քաղաքի բնակչության՝ դամբարանների տերերի ունեցվածքային տարբերության մասին։ Դամբարաններից մի քանիսի թաղման կրակի հետքերը զբաղեցնում էին 8—10 քմ տարածություն, որտեղից հայտնվում էին մեծ քանակությամբ կենդանիների վառված ոսկորներ և տարբեր տեսակի խեցեղեններ, որոնք վկայում են թաղման ծիսակատարության ժամանակ տեղի ունեցած հոգեհացի ճոխության մասին։ Սրանց կողքին հանդիպում էին այնպիսիք, որտեղ կրակի և նյութական մնացորդների հետքերը շատ աննշան էին, երբեմն մի քանի բեկոր։

Հայտնի է, որ դիակիզումով թաղումը կապված էր մեծ դժվարությունների ու ծախսերի հետ։ Հավանաբար բնակչության ստորին խավերը դիակիզումը կատարում էին առանց զոհաբերությունների, համեստ հոգեհաց տալով կամ խուսափում դիակիզումից և թաղումը կատարում էին հողի կտրվածքում, կարասների մեջ, փայտե դագաղների կամ պատգարակների վրա (ինչպես բլուրներից արևմուտք գտնվող դամբարանադաշտում)։

Դիակիզումը, անշուշտ, տեղական հին ավանդույթների շարունակությունն է։ Սակայն, ինչպես այս, այնպես էլ Հայաստանի հելլենիստական շրջանի և մ. թ. առաջին դարերի թաղման ձևերն ու ծիսակատարությունները որոշ ընդհանրություններ ունեն մերձավորարևելյան, փոքրասիական և այլ հելլենիստական երկրների թաղման ձևերի հետ։ Այսպես, օրինակ, ընդհանուր էր կա-

---

21 Е. Г. Кастанаян, Обряд гризны в Боспорских курганах (СА, XIV, 1950, стр. 130).

22 Հոդվածում բերվում են միայն թաղման ծիսակատարության հետ կապված որոշ արարողություններ։

բասների և կավե սարկոֆագների մեջ թաղելու սովորությունը, հոգեհացի ժամանակ անոթների բեկորներ և սննդի մնացորդները թաղման կրակի մեջ նետելը, ննջեցյալի բերանին կամ ձեռքին դրամ դնելը, թաղման ժամանակ դամբարանում կավե արձանիկներ, թոշնի կամ քարե ձվեր[23] *(Արտաշատ, Սիսիան, Հասան-Ղալա*[24]*), վեգեր դնելը և այլն։*

Այդ ընդհանրությունները, ամենայն հավանականությամբ, հետևանք էին ո՞չ միայն հարևան հելլենիստական երկրների հետ ունեցած սերտ կապերի և փոխազդեցությունների։ Շատ հավանական է, որ այս հարցում Արտաշատի համար դեր են խաղացել նաև Տիգրան II-ի և Արտավազդի օրոք Կիլիկիայից, Ասորիքից և այլ վայրերից բռնի գաղթեցված բնակչության սովորությունները։ Ըստ երևույթին, նրանց մի մասը բնակվել է Արտաշատի հարավ-արևելյան հատվածում։ Հնարավոր է, որ այստեղ, տեղական բնակչության հետ միասին, թաղվել են նաև եկվորները։

Քննությունը ցույց է տալիս, որ Արտաշատում պեղված այս դամբարանները պատկանել են շարքային և միջին կարողության քաղաքացիներին։ Ինչ վերաբերում է Սիսիանի դամբարանին, ապա այն, դատելով հայտնաբերված հարուստ իրերից, թաղման կրակից, հոգեհացի ծոխությունից, պատկանել է տեղի նշանավոր իշխաններից մեկին (ոսկյա գավազանի գլուխները իշխանության և հզորության խորհրդանիշ են)։ Դամբարանը, հավանաբար, եղել է տոհմական և այնտեղ կատարվել է մի քանի թաղում։ Այդ են վկայում դամբարանի մուտքի շարվածքը, նրա ընդարձակությունը և թաղման ձևը։

КРЕМАЦИЯ В АРМЕНИИ (II в. до н. э. — III в н. э.)

Ж. Д. ХАЧАТРЯН

Резюме

Раскопки последних лет в Армении, особенно Сисианской гробницы и Арташатских некрополей, показывают, что как в эллинистический период, так и в первые века н. э. в Армении существовали различные виды захоронений, из которых особого внимания заслуживает кремация, представляющая интерес в плане изучения обрядов захоронения и ряда вопросов, связанных с культом.

Кремация производилась на месте, в яме или вокруг нее и сопровождалась торжественной похоронной церемонией и трапезой. У некоторых захоронений раскопаны предназначенные для трапезы прямоугольные площадки различной величины. В захоронениях найдены остатки золы, смешанной с черной липкой землей, куски деревянного угля, черепки керамики.

Будучи продолжением местной старой традиции, кремация как вид захоронения имеет некоторую общность с традициями Ближнего Востока, Малой Азии и др. стран.

---

23 *Հունաստանում այն կապվում էր թաղման հետ, համարվում էր ամեն ինչի սկիզբը և ծառայում էր որպես մաքրագործող զոհաբերություն։*

24 С. В. Тер-Аветисян, Курганы Хасан-Калы («Известия Кавказского историко-археологического института», т. IV. Тифлис, 1926, стр. 80).